ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ն ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/4 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
9	ՀՀ արդարադատության նախարարի 2012թ. մարտի 7-ի N 31-Ն հրամանով հաստատված Տարազաբաճկոն (Ձև 1 կցվում է) սև կիսաբրդյա կաբարդին կտորից է (արտիկուլ- 23.11 պոլիէսթեր 50%, բուրդ 50% խտությունը առնվազն 317գրամ/մ2 ուրվագիծը ուղիղ): Արդարադատության լեյտենանտից-կապիտան կոչում ունեցող աշխատակիցների համար միակոճկուն է՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով 4 ոսկեգույն կոճակներով, մարմինը կիսագրկող, հարթ մակերեսներով, հետծալված օձիքով և սովորական երկկարանի թևքերով, թիկնամասի ներքևում՝ կտրվածքով: Տարազաբաճկոնը աջ և ձախ կողմերից ունենում է կափույրով ծածկվող կտրվածքով գրպաններ, իսկ կրծքի ձախ մասում՝ կտրվածքով գրպան: Արդարադատության մայորից-գնդապետ կոչում ունեցող աշխատակիցների համար՝ երկփեղկանի, երեք կոճականի տարազաբաճկոն, թիկնամասի ներքևում՝ առանց կտրվածքի: Արդարադատության լեյտենանտից-գնդապետ տարազաբաճկոնի օձիքի վրա ամրացվում է Արդարադատության նախարարության խորհրդանշանը: Արդարադատության լեյտենանտից-գնդապետ կոչում ունեցող աշխատակիցների Տարազաբաճկոնի օձիքը և թևածալքերը՝ ոսկեգույն (դեղնավուն) եզրաշերտով է՝ 2,5 մմ լայնությամբ: Կանանց համար տարազաբաճկոնի ձևը նույնն է, կոճկվում է դեպի ձախ: Տաբատը Սև կիսաբրդյա կաբարդին կտորից է (արտիկուլ- 23.11 պոլիէսթեր 33%, բուրդ 67% խտությունը առնվազն 317գրամ/մ2 ուրվագիծը ուղիղ): Ազատթող փողքերով տաբատը, ուղիղ, առանց ծալքերի, ոսկեգույն (դեղնավուն) եզրաշերտով: Կանանց համար տաբատի ձևը նույնն է, կոճկվում է դեպի ձախ: Մատակարար կազմակերպությունը պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի կտորի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային

	խտության վերաբերյալ՝ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Փորձաքննության դրական արդյունքներից հետո ներկայացնել նմուշ՝ հաստատելու համար համապատասխան ստորաբաժանմանը: Պատվիրատուն իրավունք ունի՝ յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակից կատարել նմուշառու և ուղարկել փորձաքննության:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО АМА ПРОДАКШН в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
9	